№ 224 Դեկտեմբերի 2 (14) 1881 Դեկտեմբերի 2 (14) № 224

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբլի: Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի

Тифлисъ. Редакція «Мшакъ»

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

„ՄՇԱԿ“

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԼՐԱԳԻՐԸ

ԵԿՈՂ 1882 ԹՒԻՆ

(ՏԱՍՆ ԵՒ ՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Կը հրատարակվի նոյն դիրքով և նոյն պրօգրամմայով.

ՊՐՕԳՐԱՄԱ. I. Տէրութեան կարգադրութիւններ, II. Առաջնորդող յօդուածներ, III. Ներքին տեսութիւն, IV. Արտաքին տեսութիւն, V. Խառն լուրեր, VI. Հեռագիրներ, VII. Ֆելիետօն կամ Բանասիրական, VIII. Յայտարարութիւններ.

ԼՐԱԳՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. 10 րուբլի է, կէս տարվան 6 ր., իւրաքանչիւր ամսին 1 րուբլի. Հատով համարները 5 կոպէկ.

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետևեալ հասցէով. Тифлисъ, редакція «Мшакъ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Մօսկվայից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անգլիա. Աւստրո-Ունգարիա. Կաթօլիկ ազգայինները. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄՕՍԿՎԱՅԻՑ

—

Նոյեմբերի 23

Համալսարանի երես տեսած մեր հայ երիտասարդները լայաղ չեն անում գնալ իրանց հայրենիքը, մեր գաւառական քաղաքներն ու գիւղերը ուսուցչութիւն անելու. Նրանք իրանց մեծ մարդ երևակայելով աշխատում են մեծ քաղաքներում մեծ պաշտօն գտնել և մեծ փող դատել. Բայց ո՞ւմ ձեռքն է անցնում այնքան հազարաւոր հայ մանուկների դաստիարակութիւնը, ո՞վ է հասարակ դասի առաջնորդը այնտեղ,—մի որ և է երրորդ կամ չորրորդ դասատան համբակ-ուսուցիչ, կամ Ներսիսեան դպրոցից ու Գէորգեան ճեմարանից աւարտած երիտասարդ. Եւ դա է գլխաւորապէս մեր հասարակ դասին զարգացում տուողը, նրան բարի ուղղութիւն ցոյց տուողը, դէպի բարոյականութիւնը, ազնիւը և օգտաւէտը առաջնորդողը. Բայց միթէ նա, որ ինքը չէ դաստիարակված կանոնաւորապէս, կարող է դաստիարակել ուրիշին, միթէ նա, որին ցոյց չեն տուել իր օգուտները, կարող է մի ժողովրդի նրա օգուտները ցոյց տալ, նրա մէջ տարածված պակասութիւններն ու չարութիւնները ջնջել, ոչնչացնել և դէպի բարոյականութիւնը առաջնորդել.

Ուրեմն սովորեցրէք և դաստիարակեցէք այդ ուսուցիչներին կանոնաւորապէս, որ նրանք ևս կարողանան ուսում տալ և դաստիարակել մեր ազգութեան խաւարով պատած գաւառացուն ինչպէս հարկն է, տուէք լաւ ուսուցիչներ, այն ժամանակ ծաղկած դրութեան մէջ կը տեսնէք և մեր ծխական ուսումնարանները, այն ժամանակ փակվածները կը բացվեն, նորերը ինչ տեղ չը կայ, կը հիմնվեն.

Ինչպէ՞ս գաւառացին անտարբեր չը լինի դէպի ծխական ուսումնարանը, երբ զզուացնում է նրան նախ ուսուցչի վարքն ու բարքը, երբ նրա որդին ոչ մի օգուտ, ոչ մի գիտութիւն չէ դուրս բերում այդ ազգային ուսումնարանից, ուրեմն միայն կորցնում է ժամանակ. բայց այդ ժամանակը որքան օգուտ կը բերէր, երբ որդին հօր հետ միասին ասեղ կամ մուրճ առնէր ձեռքը, երբ հօր կրպակում անգամ ծառայի պաշտօն կատարէր.

Եւ ինչպէս կամ ումից բան սովորէ խեղճ աշակերտը. միթէ այն ուսուցչից, որ չէ գրգռում նրա սէրը դէպի իր դասատու առարկաները, երբ չէ հասկացնում նրանց անհրաժեշտութիւնը, երբ չէ սովորեցնում նրանց հասկանալ և քննել այն, ինչ կարդում է, երբ այն ժամանակը, որ նա գործ է դնում իր դասերի վրա, կորչում է իզուր տեղը, երբ աշակերտը իր ուսուցչի տգիտութեան պատճառով, սովորում է հաւատալ կուրօրէն նրա խօսքերին, ուրեմն և անընդունակ է դառնում մտածելու և դատելու. պարզ է, որ իր չոր և անկանոն դասատուութիւնից ուսուցիչը զզուացնում է աշակերտին ուսումից.

Եւ դեռ մեր պատուելի ուսուցիչները գանգատվում են, որ ժողովուրդը չէ աշխատում պահպանել ուսումնարանի գոյութիւնը, որ ուսումնարանը աշակերտ կամ փող չունենալու պատճառով փակվում է. և մեր լրագրութիւնը անդադար կրկնում է, որ այդ ծխական ուսումնարաններից աւարտողներից ոչ մի բաժանորդ չունեն, և գրքեր հրատարակող անձերն և ընկերութիւնները նոյնպէս գանգատվում են, որ իրանց գրքերը շատ չեն գնվում.

Բայց հաւատացէք, որ այդ բոլորը կախված է գաւառական ուսուցիչներից. Յիշում եմ, երբ ես հայրենիքումս էի, այնտեղի ծխական ուսումնարանի ուսուցիչները կիրակի օրերը գրականական երեկոներ էին ունենում, և ժողովուրդը ուրախութեամբ յաճախում էր. ուսուցիչները նոցա հասկանալի ոճով բացատրում էին ուսման և դաստիարակութեան անհրաժեշտութիւնը, տեղեկութիւն տալիս հայոց պատմութեան և եկեղեցու մասին, ցոյց էին տալիս՝ թէ ինչպիսի առաւել հեշտ միջոցով կարող են փող վաստակել, մի խօսքով նոյնպէս և նրանց շահերը պաշտպանելով.

Հասկանալի է որ այսպիսի երեկոները գրգռում էին նկատելի կերպով ժողովրդի սէրն ու համակրութիւնը դէպի ուսումնարանը, նրանք սկսում էին ընթերցասէր լինել, հետաքրքրվում էին իրանց արիւնակից եղբայրների արդի կեանքով. Ուրեմն միթէ այսպիսի երեկոները չէին պահպանի ուսումնարանի գոյութիւնը ամենայն տեղ, միթէ չէին նպաստի մեր լրագրների ու գրքերի տարածմանը, և միթէ այդ գաւառական ուսուցչի պարտականութիւնը չէ.

Բայց մենք չունենք այդպիսի ուսուցիչներ. մեր արդի ծխական ուսումնարանի ուսուցիչը, բացի նրանից, որ իր առաջին պարտականութիւնները չէ կարող կատարել ինչպէս հարկն է, զուրկ է և մի այդպիսի ազնիւ գործ կատարելուց, որովհետև տգէտ է, և անկանոն դաստիարակված. Բայց ո՞վ է մեղաւորը, միթէ ուսուցիչը,—ո՛չ, այլ այն ուսումնարանը, որ ծխական ուսումնարանների համար ուսուցիչներ ու քահանաներ է պատրաստում.

Ուշադրութիւն դարձրէք Ներսիսեան դպրոցի և նոյնպէս Էջմիածնի ճեմարանի վրա. դրանք ունեն միջոց ու յարմարութիւններ լաւանալու, հանդէս հանեցէք դրանց թոյլ և վնասակար կողմերը, գործել պահանջեցէք, այո, գործել կանոնաւորապէս այն անձինքներից, որոնք կառավարում են այդ ուսումնարանները, մտրակեցէք անդադար ու անխնայաբար նրանց, երբ թոյլ տեսնէք, աշխատեցէք մտցնել նոր և լաւ ուղղութիւններ, աշխատեցէք ծաղկեցնել այդ երկու հիմնարկութիւնները, և այն ժամանակ ծաղկած դրութեան մէջ կը տեսնէք և՛ մեր ծխական ուսումնարանները. Այո, այդ երկու հիմնարկութիւնները մեծ նշանակութիւն ունեն մեզ համար. այդտեղից աւարտողների ձեռքին է մեր հասարակ դասի օգուտը, դրանք են նրան ճանապարհ, ուղղութիւն ցոյց տուողը. եթէ վատ են և անընդունակ այդ առաջնորդները, ուրեմն և վատ ու վնասակար ճանապարհով կընթանայ և հասարակ դասը. բայց միթէ այդ քիչ բան է. Ուստի պէտք է ուղղել և լաւացնել այդ ուսումնարանները, աւելորդ չը պէտք է համարել ուշադրութիւն դարձնել դրանց վրա. եթէ կեանք տաք այդ ուսումնարաններին, կեանք կը տաք և մեր հասարակ դասին.

Ա. Տ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Շնորհակալութեամբ ստացանք պ. Աւետիս Գուլակեանցի թարգմանած գրքոյկը, որ բաղկացած է երկու փոքրիկ վէպերից «Գրանադայի ջրբեր» և Նիւրընբէրգեան ձու». Տպված է Թիֆլիսում, Մովսէս Վարդանեանի և ընկ. տպարանում, 1881 թւին.

—

Չը նայելով որ Թիֆլիսում կայ «Գրքերի հրատարակութեան» ընկերութիւնը և այժմ «Բարեգործական» ընկերութիւն, դարձեալ ամեն մարդ, որ կամ մի գիրք է ուզում հրատարակել, կամ նիւթական օժանդակութիւն է խնդրում, անպատճառ դիմում է «Մշակի» խմբագրութեանը. Թող դիմեն այդ երկու ընկերութիւններին. Մեր խմբագրութիւնը ամեն բան չէ կարող անել. Միթէ, չը նայելով որ այդ երկու ընկերութիւններ կան, մենք պէտք է նրանց պաշտօնը կատարենք. Մինչև որ «Բարեգործական» ընկերութիւնը չը կար, «Մշակը» 1878 թւից սկսած, հաւաքեց մեծ գումարներ այլ և այլ նպատակներով. Վանի հրդեհից՝ վնասվածների համար, Արարատեան ընկերութեան համար, Միացեալ ընկերութեան համար, սովից տանջվողների համար, «Ժուռնալ դ'Օրիանի» բաժանորդագրութեան համար, և այլ նպատակների համար մենք չորս տարվայ ընթացքում հաւաքեցինք աւելի քան 100,000 րուբլի. «Մշակի» խմբագրութիւնը, ուրեմն առանց մեծ մեծ խօսելու, առանց ընդհանուր ժողովներ կազմելու չորս տարվայ մէջ կարողացաւ այնքան փողեր հաւաքել, որքան հազիւ թէ տաս տարվայ մէջ նոր հիմնված հայկական Բարեգործական ընկերութիւնը կը կարողանայ հաւաքել, եթէ մանաւանդ այդպէս դանդաղ կընթանայ, ինչպէս այժմ, իր հիմնվելուց յետոյ է ընթանում. Ոչ մի տեղ ձայն չը կայ նրա մասին, ոչ մի լրագրում յայտարարութիւն, ազդ, յորդոր ընկերութեան խորհրդի կամ նրա նախագահի կողմից չէ տպվում, ընդհանուր ժողովից յետոյ ոչինչ չէ լսվում թէ ինչ է անում ընկերութիւնը.

—

Մօսկվայում հրատարակվող «Փարոս Հայաստանի» երկամսեայ պատկերազարդ հանդէսը իր նոյեմբեր—դեկտեմբեր տետրակի մէջ յայտնում է թէ դադարում է հրատարակվելուց. Շատ ցաւալի է որ դարձեալ դադարել է մեր պարբերական հրատարակութիւններից մինը. Խմբագիրը յայտնում է թէ իր գլխաւոր աշխատակցի հիւանդութեան պատճառով է դադարում հրատարակութիւնը. Մի և նոյն ժամանակ յայտարարութեան մէջ յայտնված է որ հանդէսը ունեցաւ 516 բաժանորդ և այս տարի վնաս կրեց 367 րուբլի. Մեր կարծիքով գործը, ուրեմն, լաւ էր գնում և հրատարակիչը գանգատվել չէր կարող ունենալով միմիայն 367 րուբլի դեֆիցիտ. Այդ տեսակ աննշան դեֆիցիտ ունենալով, «Փարոս» հանդէսը կարող էր հետևեալ տարի օգուտ էլ ունենալ. Եթէ այդ տեսակ աննշան դեֆիցիտի համար պէտք է կանգնեցնել հրատարակութիւնը, ինչ պիտի անեն նրանք, որոնք տարեկան 2000 ր. դեֆիցիտ ունէին տաս տարի շարունակ. Բայց մի բան զարմացնում է մեզ. «Փարոսի» հրատարակիչը համ գանգատվում է որ նիւթապէս ժողովուրդը չօգնեց նրան, համ էլ ակնարկում է որ ստիպված է դադարեցնել իր հրատարակութիւնը, որովհետև այլ և այլ յարձակմունքներ է կրել. Եթէ լրագիրները պէտք է դադարէին հրատարակվելուց՝ կրած յարձակմունքների պատճառով, ամենից վաղ «Մշակը» պէտք է դադարէր, որովհետև ոչ մի հրատարակութիւն չէ եղել հայերի մէջ, որ այդքան յարձակմունքներ, հայհոյանքներ, անձնական վիրաւորանքներ կրած լինէր, որքան «Մշակը». Բայց այնու ամենայնիւ մեր թերթը, փոխանակ ընկնելու, տարուց տարի աւելի բաժանորդներ է ստանում.

—

«Донская Пчела» լրագիրը իր № 89 բանասիրականի մէջ տպեց մի յօդուած «Еще одно доказательство» վերնագրով, որ քաղուածք է «Մշակի» № 214 մէջ տպված «Դարձեալ մի ապացոյց» առաջնորդող յօդուածից.

—

Վլադիկավկասի ռուս թատրոնական խումբը հասաւ ԹԻՖԼԻՍ և շարունակ մինչև փետրվար ամիսը, տալու է ներկայացումները մեր քաղաքային թատրոնում.

—

Այս օրերս կատարվեցաւ մի յանդուգն գողութիւն Սարաջևի տանը, այն բնակարանում, որտեղ կենում է ֆրանսիական օպերէտային խումբը, որ խաղում է Արծրունու թատրոնում. Մինչև որ խմբի բոլոր անդամները դուրսն էին, ներկայացումն էին տալիս, անյայտ գողեր մտան նրանց սենեակները, գողացան մօտ 1500 րուբլ գումարի փող և իրեղէններ և նորից փակեցին սենեակների դռները. Պօլիցիային իմաց տրվեցաւ. Կարծում են որ այդ գողութիւնը կատարվեցաւ տան ծառաների ձեռքով. Լսեցինք որ իմերէլ ծառաներից երկուսը բանտարկված են.

—

«Газета Гатцука» լրագրին թոյլ է տրված հրատարակվել առանց ցէնզուրայի.

—

«Порядокъ» լրագիրը հերքում է այն լուրը որ իբր թէ ռուս սեմինարիան Լայպցիգի մէջ պէտք է փակվի.

—

Ստացանք ԳԱՆՁԱԿԻՑ պ. Աւետիս Մալեանցից 4 րուբլ բաժանորդագին «Journal d'Orient» լրագրի համար. Նախընթաց փողի հետ կանի 896 րուբլ 15 կոպէկ.

—

Մեզանից անկախ պատճառներով «Մշակի» երէկվայ համարը չը կարողացանք հրատարակել.

—

Շնորհակալութեամբ ստացանք հետևեալ նոր գրքերը. պ. Գրիգոր Շահբուդաղեանցի «Պապի ձեռնոցները», մանկական վէպ. Նոյն պարոնի թարգմանութիւնը «Մայրական դաստիարակութիւնը» գործ Ժ. Բամբոսսոնի և վերջապէս պ. Ս. Մանդինեանից փոխադրած «Կեանքի հանգա-